# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08.09.2023թ.**

Հիմք ընդունելով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 1-ի N 09-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը հավանության տալու (Վահագն Գրիգորյանի պաշտոնավարումը շարունակելու) նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 5-ից 6-ը անցկացվել է արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

**Օրակարգ.**

1. Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը (Վահագն Գրիգորյանի պաշտոնավարումը շարունակելուն) հավանության տալը:

**Քվեարկությանը մասնակցել են՝**

| | |
|---|---|
| Ա. Ավանեսյան | - ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ) |
| Ռ. Սարգսյան | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ |
| Ա. Դանիելյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ |
| Ա. Խոջոյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Լ. Բալյան | - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ |
| Վ. Սիրունյան | - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Ժ. Մայիլյան | - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ |
| Տ. Քեյան | - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար |
| Շ. Դանիելյան | - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար |
| Ս. Սահակյան | - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող |

**Քվեարկությունը համարվում է կայացած:**

**Քվեարկության արդյունքում.**

1) Ա. Ավանեսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
3) Ա. Դանիելյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
10) Ս. Սահակյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ:

**Քվեարկության արդյունքը՝** օրակարգի հարցին **10 կողմ, 0 դեմ:**

**Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.**

**1.** Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի Վահագն Գրիգորյանի թեկնածությանը (պաշտոնավարումը շարունակելուն):

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

**ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**